# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Սեպտեմբերի 7-ին, կիրակի. - Դ կիր. զկնի Վերափոխման:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Զի տաճար Աստուծոյ սուրբ է, որ էք դուք» (Ա Կորնթ. Գ 17) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 26):

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***Սեպտեմբերի 8-ին, երկուշաբթի. - Տօն Ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱննայէ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Զիրեկյանցը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Սեպտեմբերի 14-ին, կիրակի. - ԽԱՉՎԵՐԱՑ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Ուխտս դիք եւ կատարեցէք» (Սաղմ. ՀԵ 12) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 29):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Սեպտեմբերի 15-ին, երկուշաբթի. - Տօն է Խաչի: Յիշատակ մեռելոց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արմաշ աբղ. Նալբանդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Զօրութիւն սուրբ խաչի քոյ Քրիստոս, որ կանգնեցաւ ի փրկութիւն աշխարհի» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 32):

Ս. Պատարագի սրբազան խորհրդից հետո կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ **«վասն համօրէն ննջեցելոց»**:

***Սեպտեմբերի 21-ին, կիրակի. - Բ. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Իջէր յերկնից ի դաշտն Արարատեան եւ հրաշակերտեցէր զեկեղեցիս Հայաստանեայց Սուրբ Էջմիածին» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 34):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Սեպտեմբերի 27-ին, շաբաթ. - Սրբոցն Գէորգայ քաջանահատակի զօրավարին, Աղեկսիոսի եւ Ռոմանոսի երգեցողին:***

Այսօր Մայր Տաճարի թանգարանային մասում, Ս. Գևորգի անունը կրող Խորանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Ջիրեկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Սեպտեմբերի 28-ին, կիրակի. - Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 37):

Ս. Պատարագի ավարտին, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն: